



**«ՄԱՍՆԱՎՈՐ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ»
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԽԹԱՆՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ**

Սույն փաստաթուղթը մշակվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (ԻՀԱ) «Ազդարարման բազմակողմանի խթանում Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) աջակցությամբ՝ Եվրոպական Միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն բարեկարգության՝ Արևելյան գործընկերության համար» ծրագրի շրջանակներում:

Սույն փաստաթղթում արտահայտված է հեղինակի՝ ԻՀԱ ղիրքորոշումը, որի համընկնումը ԲԿԳ և ԵՄ ղիրքորոշման հետ պարտադիր չէ:

*Հրատարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:
© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՅԻԱ*

ԵՐԵՎԱՆ,
Սեպտեմբեր, 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ.....	3
Ծանոթագրություն.....	4
I. Միջազգային ստանդարտներ և առաջավոր փորձ.....	5
1. Միջազգային ստանդարտներ.....	5
Ա) Մոտեցում 1: Մասնավոր ոլորտում ներքին ազդարարման համակարգերը՝ իմպերատիվ նորմերի համատեքստում.....	5
Բ) Մոտեցում 2: Մասնավոր ոլորտում ներքին ազդարարման համակարգերը՝ կամավոր միջոցառումների խթանման և հակակոռուպցիոն համապատասխանության ապահովման համատեքստում.....	7
2. Միջազգային փորձ.....	12
Ա) Եվրոպական Միության ընդհանուր նվազագույն պահանջներ.....	12
Բ) ԵՄ անդամ պետությունների կարգավորումներ, որոնք սահմանում են ԵՄ հրահանգով նախատեսված պահանջներից հավելյալ պահանջներ.....	13
Գ) ԵՄ Արևելյան գործընկերության երկրների կարգավորումներ.....	20
II. Ազգային օրենսդրություն և պրակտիկա.....	21
1. Մասնավոր ոլորտում ներքին ազդարարման համակարգերը՝ իմպերատիվ նորմերի համատեքստում.....	21
2. Մասնավոր ոլորտում ներքին ազդարարման համակարգերը՝ կամավոր միջոցառումների խթանման և հակակոռուպցիոն համապատասխանության ապահովման համատեքստում.....	24
Ա) Կորպորատիվ կառավարման սկզբունքների խթանման համատեքստում.....	24
Բ) Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի համատեքստում.....	28
Գ) Պետական աջակցության ծրագրերի և արտոնությունների համատեքստում.....	29
Դ) Հավաքական գործողությունների և նախաձեռնությունների համատեքստում.....	29
III. Եզրակացություն.....	31
IV. Առաջարկություններ.....	37

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԼԳ	Արևելյան գործընկերություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՍ	Եվրոպական միություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն վերլուծության շրջանակներում կատարված վերլուծությունները վերաբերում են մասնավոր ոլորտին առնչվող ներքին հաղորդումների (ազդարարումների) ընթացակարգերին և առանձնահատկություններին: Արտաքին և հանրությանն ազդարարումների մասով կատարված վերլուծությունները, որոնք վերաբերում են ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ոլորտի վերաբերյալ ներկայացված հաղորդումների (ազդարարների) ընթացակարգերին, ներկայացված են «Ազդարարման տեսակների կատարելագործում» փորձագիտական վերլուծության շրջանակներում:

I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁ

1. Միջազգային ստանդարտներ

Մասնավոր հատվածում ազդարարների պաշտպանության ապահովմանն ուղղված ձևաչափերի և ստանդարտների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ձևավորվել է այդ նպատակին ուղղված 3 մոտեցում՝ ներպետական օրենսդրական դրույթների ընդունում, մասնավոր հատվածում կամավոր միջոցառումների խթանում՝ որպես կանոն հակակոռուպցիոն համապատասխանության համատեքստում կամ երկուսի մեկտեղում:¹

Ա) ՄՈՏԵՑՈՒՄ 1: ՄԱՍՆԱՎՈՐ ՈՒՈՐՏՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ՝ ԻՄՊԵՐԱՏԻՎ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ներպետական օրենսդրական դրույթների ընդունում նախատեսող իրավական գործիքների մի մասը հստակորեն նախատեսում են մասնավոր ոլորտում ազդարարների պաշտպանության մեխանիզմների ներդրումը, իսկ մյուս մասը տալիս է մեխանիզմների ներդրման պահանջի նախատեսման ընդհանրական ձևակերպում՝ չտարբերակելով հանրային և մասնավոր ոլորտի աշխատողների միջև: Այսպես.

Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) «Կոռուպցիայի դեմ պայքարի» կոնվենցիայի 33-րդ հոդվածը նախատեսում է յուրաքանչյուր մասնակից պետության պարտավորությունը դիտարկել իր ներքին իրավական համակարգի մեջ որևէ անարդարացի վերաբերմունքից պաշտպանության ապահովման համար պատշաճ միջոցների նախատեսման հնարավորությունը *«բոլոր անձանց համար, ովքեր բարեխղճորեն և խելամիտ հիմքերով իրավասու մարմիններին հայտնում են այն իրավախախտումների հետ կապված փաստերի մասին, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան»:*²

¹ OECD (2012), “Study on G20 Whistleblower Protection Frameworks, Compendium of Best Practices and Guiding Principles for Legislation”, OECD, Paris, available at: <https://www.oecd.org/g20/topics/anti-corruption/48972967.pdf>:

² UN General Assembly, United Nations Convention Against Corruption, 31 October 2003, A/58/422, Article 33, available at: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021>:

Տարածաշրջանային մակարդակով Եվրոպայի խորհրդի (այսուհետ՝ ԵԽ) «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան,³ ԵԽ «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիան,⁴ Աֆրիկյան միության «Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան⁵ և Ամերիկյան պետությունների կազմակերպության «Կոռուպցիայի դեմ պայքարի» միջամերիկյան կոնվենցիան⁶ ևս պարունակում են նման դրույթներ՝ մասնակից պետություններին ուղղված իրենց կոչում պահանջելով նախատեսել ազդարարների պաշտպանության մեխանիզմների ներդրումը կամ դիտարկել դրա նախատեսումը՝ հստակորեն չտարբերակելով մասնավոր և պետական հատվածի աշխատակիցների միջև:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) «Կաշառակերության դեմ պայքարի հանձնարարականները» կոչ են անում մասնակից պետություններին ապահովել, որ ազդարարների պաշտպանությունը գործի ինչպես՝ պետական, այնպես էլ՝ մասնավոր հատվածի աշխատակիցների համար:⁷ Համաձայն ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 1.2. հենանիշի ազդարարման հետ կապված օրենսդրությունը պետք է տարածվի, ի լրումն հանրային ոլորտի աշխատողների, նաև մասնավոր ոլորտի աշխատողների և պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների խորհրդի անդամների և աշխատողների վրա:⁸ Միննույն ժամանակ, մոնիթորինգային ուղեցույցը «ազդարարման հետ կապված օրենսդրություն» եզրույթը սահմանում է որպես *«ցանկացած օրենսդրական դրույթ, որը*

³ Council of Europe, Criminal Law Convention on Corruption, 27 January 1999, Article 22, available at: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=29959>:

⁴ Council of Europe, Civil Law Convention on Corruption, 4 November 1999, Article 9, available at: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24512>:

⁵ African Union Convention on Preventing and Combating Corruption, 11 July 2003, Article 5, Section 6, available at: <https://www.refworld.org/docid/493fe36a2.html>:

⁶ Organization of American States (OAS), Inter-American Convention on Forced Disappearance of Persons, 9 June 1994, Article III, Section 8, available at: <https://www.refworld.org/docid/3ae6b38ef.html>:

⁷ OECD Recommendation of the Council for Further Combating Bribery of Foreign Public Officials in International Business Transactions, 2021 Edition, Section XXII, available at: <https://legalinstruments.oecd.org/en/instruments/OECD-LEGAL-0378>:

⁸ OECD, Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Assessment Framework, 2023, pp. 34-35, available at: <https://www.oecd.org/investment/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Assessment-Framework-ENG.pdf>

սահմանում է ազդարարումը, հաղորդումների ներկայացման ընթացակարգերը և ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները»⁹

Բացի այդ, թիվ 2.1. հենանիշը սահմանում է, որ օրենքով պետք է նախատեսված լինեն և գործնականում կիրառվեն ներքին ազդարարման ընթացակարգեր (channels) պետական հատվածի մարմիններում և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում (state-owned enterprises), որոնց առնչությամբ մոնիթորինգային ուղեցույցը սահմանում է «օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված լինելու պահանջ»: Բացի այդ, «ազդարարման ընթացակարգեր (channels)» եզրույթը մեկնաբանում է հետևյալ կերպ՝ «*օրենքով նախատեսված է, որ առնվազն պետական հատվածի մարմինները և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունները պարտավոր են ընթացակարգեր սահմանել իրենց աշխատողների համար՝ ներկայացնելու կոռուպցիոն հակաօրինական արարքների վերաբերյալ ազդարարումներ պետական հատվածի մարմիններում և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում նման ազդարարումների ստացման և ընթացք տալու համար պատասխանատու անկողմնակալ անձին կամ ստորաբաժանմանը*»:

Բ) ՄՈՏԵՑՈՒՄ 2: ՄԱՍՆԱՎՈՐ ՈՒՈՐՏՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ՝ ԿԱՄԱՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՎՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Կամավոր միջոցառումների խթանման համատեքստում մասնավոր ոլորտում ազդարարման համակարգերի ներդրման առանցքային միջոց է հանդիսանում հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի և կառուցակարգերի ներդրումն ու դրանց կիրառման խրախուսումը: Մասնավոր հատվածում ազդարարման համակարգերի ներդրումը հանդիսանում է հակակոռուպցիոն համապատասխանության ինստիտուտի բաղադրիչ: Միջազգային պրակտիկայում մասնավոր հատվածի կողմից հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի և կառուցակարգերի ներդրումն ու դրանց կիրառման խրախուսումը պետության կողմից իրականացվում է հետևյալ միջոցառումների միջոցով՝

⁹ OECD, Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Guide, 2023, p. 44, available at: <https://www.oecd.org/corruption/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Guide-ENG.pdf>:

- Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունումը և դրա կիրառման վերահսկողության մեխանիզմների սահմանումը:
- Օրենսդրական նորմերի սահմանումը, որոնք նախատեսում են կորպորատիվ կառավարման և հատկապես՝ հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի ներդրման իմպերատիվ պահանջ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում և բորսայում գրանցված թողարկող կազմակերպություններում:
- Օրենսդրական նորմերի սահմանումը, որոնք մասնավոր հատվածի կազմակերպություններում կորպորատիվ կառավարման և հատկապես՝ հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի առկայությունը դիտարկում են որպես իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառող կամ մեղմացուցիչ հանգամանք:
- Օրենսդրական նորմերի սահմանումը, որոնք մասնավոր հատվածի կազմակերպություններում կորպորատիվ կառավարման և հատկապես՝ հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի առկայությունը դիտարկում են որպես առավելություն տվող չափանիշ պետական գնումների գործընթացի, պետություն-մասնավոր հատված գործընկերության, պետական աջակցության, հարկային կամ մաքսային արտոնությունների տրամադրման ժամանակ:
- Գործարար ոլորտում կորպորատիվ կառավարման և հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ներդրումը և հավաքական գործողությունները խթանող իրազեկման արշավների, նախաձեռնությունների և վերապատրաստումների իրականացումը՝ մասնագիտացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ) հետ (գործարար շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ (business support organisations) և գործարար անդամակցությամբ զբաղվող կազմակերպություններ (business membership organisations)) համագործակցությամբ:

Մասնավոր հատվածում ազդարարների պաշտպանությանն առնչվող հիմնական չափորոշիչներ և ուղեցույցներ նախատեսող միջազգայնորեն ճանաչված հակակոռուպցիոն համապատասխանության ձևաչափերն են՝ ՏՀԶԿ «Կաշառակերության դեմ պայքարի հանձնարարականների» Հավելված II-ով հաստատված «Ներքին վերահսկողության, էթիկայի և

համապատասխանության վերաբերյալ լավ պրակտիկաների ուղեցույցը»¹⁰, «Բազմազգ ձեռնարկությունների համար ուղեցույցները»¹¹, ՏՀԶԿ-ի և Մեծ քսանյակի «Կորպորատիվ կառավարման սկզբունքները»¹², Թրանսփարենսի Ինթերնեշնլի «Կաշառակերության դեմ պայքարի բիզնես սկզբունքները»¹³, Առևտրի միջազգային պալատի «Շոթթման և կաշառակերության դեմ պայքարի վարքագծի կանոնները»¹⁴, Համաշխարհային բանկի «Բարեվարքության համապատասխանության ուղեցույցները»¹⁵, Համաշխարհային տնտեսական ֆորումի «Կաշառակերության դեմ պայքարի սկզբունքները»¹⁶: Բացի այդ, հատկանշական է նաև Ստանդարտացման միջազգային կազմակերպության կողմից մշակված «Ազդարարման կառավարման համակարգեր» ISO 37002:2021 ստանդարտը, որը պարունակում է ուղեցույցներ վստահության, անկողմնակալության և պաշտպանության սկզբունքների վրա հիմնված ազդարարման արդյունավետ կառավարման համակարգի ստեղծման, ներդրման և պահպանման համար:¹⁷

¹⁰ OECD, Good Practice Guidance on Internal Controls, Ethics and Compliance, Section A.11-13:

¹¹ OECD, OECD Guidelines for Multinational Enterprises, 2011 Edition, Chapter 2, Section 9, available at: <https://www.oecd.org/corporate/mne/49744860.pdf>:

¹² OECD, G20/OECD Principles of Corporate Governance, 2023 Edition, Principle VI.D.5, available at: https://www.oecd-ilibrary.org/governance/g20-oecd-principles-of-corporate-governance-2023_ed750b30-en, հայերեն՝ https://corpgov.am/wp-content/uploads/2021/09/g20_oecd-principles-of-corporate-governance-arm.pdf?download=false:

¹³ Transparency International, Business Principles for Countering Bribery: Commentary, 2015, Section 6.6, available at: https://www.transparency.org/files/content/publication/2015_BusinessPrinciplesCommentary_EN.pdf:

¹⁴ International Chamber of Commerce (ICC), Rules of Conduct to Combat Extortion and Bribery, 2005, Article 7, available at: <https://iccwbo.org/news-publications/policies-reports/icc-rules-of-conduct-and-recommendations-to-combat-extortion-and-bribery-2005-edition/>:

¹⁵ World Bank Group, Integrity Compliance Guidelines, 2010, Section 9, available at: <https://thedocs.worldbank.org/en/doc/06476894a15cd4d6115605e0a8903f4c-0090012011/original/Summary-of-WBG-Integrity-Compliance-Guidelines.pdf>:

¹⁶ World Economic Forum Partnering against Corruption Initiative (PACI), 2005, Principles for Countering Bribery, Section 5.5, available at: https://www.mickikaminska.com/GOPAC/Docs/Main/PACI_Principles_EN.pdf:

¹⁷ International Organization for Standardization, ISO 37002:2021(en) Whistleblowing management systems — Guidelines, available at: <https://www.iso.org/obp/ui/#iso:std:iso:37002:ed-1:v1:en>:

Մի շարք միջազգային¹⁸ և տարածաշրջանային¹⁹ կազմակերպությունների կողմից մշակվել են ազդարարման ոլորտում լավ պրակտիկաների և սկզբունքների ձեռնարկներ, որոնք անդրադառնում են նաև մասնավոր ոլորտի ներքին ազդարարման համակարգերին: Օրինակ, ՏՀԶԿ-ն, ՄԱԿ-ի Թմբամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակը և Համաշխարհային բանկը համատեղ մշակել են նշյալ գործիքներով նախատեսված ուղեցույցների և չափորոշիչների համեմատական աղյուսակ:²⁰

Դրանք, մասնավորապես, կոչ են անում ընկերություններին, այդ թվում՝ վերջինիս խորհրդի անդամներին՝ հակակոռուպցիոն համապատասխանության ապահովման համատեքստում, այդ թվում՝ կորպորատիվ կառավարման կանոնագրքերի միջոցով ընդունել ազդարարների պաշտպանության քաղաքականություն, նախատեսել ազդարարման պատշաճ և գաղտնի ընթացակարգեր (channel), ստացված ազդարարումների պատշաճ քննության ընթացակարգեր և ազդարարների գաղտնիության և նրանց նկատմամբ կիրառված վնասակար գործողություններից պաշտպանության մեխանիզմներ:

Անհրաժեշտ է ապահովել ազդարարման հնարավորություն կառավարման հիերարխիայում գտնվող բոլոր անձանց սխալ արարքների կամ չարաշահումների մասին, հատկապես՝ փոքր գրասենյակներում, որտեղ անհատը կարող է ազդարարել իր ղեկավարի կամ մերձավոր գործընկերոջ կողմից կատարված սխալ արարքների մասին: Կախված կազմակերպության չափից և իրագործելիությունից՝ ազդարարումներ ստանալու համար կարող է ստեղծվել անկախ ստորաբաժանում, կամ գործող ներքին հսկողության բաժնին կամ համապատասխանության բաժնին վերապահվել նման գործառույթ: Այստեղ անկյունաքարային նշանակություն ունի այն հանգամանքը, որ աշխատողը պետք է իմանա՝ ում և ինչպես դիմել ենթադրյալ հակաօրինական վարքագծի վերաբերյալ: Բացի այդ, կարևորվում է կազմակերպության կողմից միջոցների ձեռնարկումը՝ ուղղված ստացված ազդարարումների նախնական գնահատման և հետագա քննության հստակ պրոտոկոլներ սահմանելուն, ազդարարման ոլորտում պատասխանատու բոլոր անձանց վերապատրաստելուն և որոշելուն, թե ինչպես են վերացվելու խախտումները՝ ապահովելու, որ դրանք չունենան շարունակական բնույթ:

¹⁸ Տես, օրինակ, UNODC, The United Nations Convention against Corruption: Resource Guide on Good Practices in the Protection of Reporting Persons, 2015, pp 35-35, available at: https://www.unodc.org/documents/corruption/Publications/2015/15-04741_Person_Guide_eBook.pdf:

¹⁹ Տես, օրինակ, PILON, Guiding Principles for Protecting Whistleblowers and Encouraging Protected Disclosures, 2017, available at: <https://pilonsec.org/digital-library/corruption-resources/>:

²⁰ OECD/UNODC/World Bank, The Anti-Corruption Ethics and Compliance Handbook for Business, 2013, Annex I, available at: <https://www.oecd.org/corruption/anti-corruptionethicscompliancehandbook.pdf>:

Լավ պրակտիկա է դիտարկվում կազմակերպության ներսում մի քանի ազդարարման եղանակների առկայությունը, այդ թվում՝ հեռախոսով, էլեկտրոնային փոստով, ֆաքսով, փոստով կամ առցանց ազդարարման հարթակներով: Կարևորվում է նաև աշխատողներին հնարավորություն ընձեռել անձամբ ներկայացնել ազդարարումը՝ գրավոր հաղորդակցման կամ լեզվական դժվարությունների դեպքում: Կազմակերպությունները կարող են նաև ազդարարման գործառույթը փոխանցել արտաքին ծառայություններ մատուցող երրորդ կողմին՝ անկողմնակալության, անկախության և ազդարարման հաղորդակցության անփոփոխության հավելյալ երաշխիքներ ապահովելու նպատակով: Օրինակ, «Բարբադոսի հանցագործություն կասեցնողները» շահույթ չհետապնդող բարեգործական կազմակերպություն է, որը ղեկավարվում է տնօրենների խորհրդի կողմից կամավոր հիմունքներով՝ բաղկացած տարբեր ոլորտների գործարարներից: Այն ապահովում է բարեվարքության թեժ գիծ, որը թույլ է տալիս կազմակերպությունների աշխատողներին ազդարարել անանուն և գաղտնի կերպով: Այնուհետև, տեղեկատվությունը կազմակերպության կողմից ներկայացվում է բոլոր պատասխանատու մարմիններին, ներառյալ՝ ոստիկանականությանը, և տեղեկատվություն ստանալուց հետո օպերատորն ազդարարին տալիս է հսկիչ համար՝ ազդարարման կարգավիճակը ստուգելու նպատակով: Անանունության ապահովման նպատակով որևէ անձնական տեղեկատվության գրանցում չի պահպանվում:²¹

Հարկ է ընդգծել նաև ՏՀԶԿ «Պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների կորպորատիվ կառավարման սկզբունքները»²² և «Պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների հակակոռուպցիոն և բարեվարքության սկզբունքները»²³, որոնք կոչ են անում պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների ազդարարման ընթացակարգերի և ազդարարների պաշտպանության մեխանիզմների նախատեսում, օրինակ՝ էթիկայի կանոնների միջոցով: Այս համատեքստում հատկանշական է, որ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի գործարար բարեվարքության ոլորտի թիվ 1 և 4 հենանիշների վերլուծությունից պարզ է դառնում, որ բորսայում գրանցված թողարկող կազմակերպություններում և պետական առևտրային կազմակերպություններում

²¹ Crime Stoppers Barbados, Who We Are, available at: <https://www.crimestoppersbarbados.com/>:

²² OECD, Guidelines on Corporate Governance of State-Owned Enterprises, 2015 Edition, Annotation to Chapter V, clauses A & C, available at: <https://doi.org/10.1787/9789264244160-en>:

²³ OECD, Guidelines on Anti-Corruption and Integrity in State-Owned Enterprise, 2019, available at: <https://www.oecd.org/corporate/Anti-Corruption-Integrity-Guidelines-for-SOEs.htm>:

հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի սահմանումը պետք է կրի իմպերատիվ բնույթ:²⁴

2. Միջազգային փորձ

Վերջին տարիներին միջազգային պրակտիկան զարգանում է այն ուղղությամբ, որ նախապատվությունը տրվում է մասնավոր հատվածում ազդարարների պաշտպանության ապահովմանն ուղղված պարտադիր օրենսդրական դրույթների սահմանմանը:

Ա) ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2019 թվականի ապրիլի 16-ին Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) խորհրդարանի կողմից ընդունված No 2019/1937 հրահանգը, որը սահմանում է ազդարարների պաշտպանության «ընդհանուր նվազագույն չափորոշիչներ», նախատեսում է պահանջ, ըստ որի՝ բիզնեսները, ներառյալ՝ մասնավոր հատվածի գործատուները, որոնք ունեն հիսուն և ավելի աշխատողներ, պետք է ստեղծեն ուղիներ (channels) և ընթացակարգեր ներքին ազդարարման և դրանց ընթացքին հետևելու համար հետագա գործողությունների համար սոցիալական գործընկերների հետ խորհրդակցելուց և համաձայնեցնելուց հետո, երբ դա պահանջվում է ազգային օրենսդրությամբ: Միննույն ժամանակ, ԵՄ անդամ պետությունները պետք է «քաջալերեն» 50-ից պակաս աշխատող ունեցող ձեռնարկություններին՝ ստեղծել թե՛ զժեր: Հրահանգով նաև նախատեսված է ժամանակացույց, որի համաձայն 50-ից 249 աշխատող ունեցող մասնավոր հատվածի գործատուների համար ներքին ազդարարման համակարգերի ստեղծման պահանջի վերջնաժամկետն է 2023 թվականի դեկտեմբերի 17-ը:²⁵

²⁴ OECD, Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Assessment Framework, 2023, pp. 37-39.

²⁵ Office of the European Union, Directive (EU) 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law. Official Journal of the European Union, L 305/17-L 305/40, available at: <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32019L1937>.

Հրահանգով մասնավոր հատվածի համար նախատեսում են հետևյալ նվազագույն պարտավորությունները՝

- Ընկերությունը պետք է ստեղծի տարբեր ուղիներ, որպեսզի ազդարարումները հնարավոր լինի ստանալ փոստի, հեռախոսի, ֆիզիկական բողոքների արկղերի, առցանց ձևաթղթերի և անձնական հանդիպումների միջոցով:
- Երրորդ կողմերը ևս կարող են ազդարարումներ ստանալ ընկերության անունից՝ պայմանով, որ դրանք երաշխավորում են անկախություն, գաղտնիություն և տվյալների պաշտպանություն:
- Յուրաքանչյուր ազդարարման ստացումը պետք է հաստատվի 7 օրվա ընթացքում:
- Իրականացված քննության վերաբերյալ բացահայտումների կամ թարմացումների վերաբերյալ հետադարձ տեղեկատվությունը պետք է տրամադրվի ազդարարին ազդարարումը ստանալուց հետո 3 ամսվա ընթացքում:

Բ) ԵՄ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆ ԵՄ ՀՐԱՀԱՆԳՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՑ ՀԱՎԵԼՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԵՄ անդամ երկրներն իրականացրել են օրենսդրական փոփոխություններ ԵՄ հրահանգի կիրարկման նպատակով, որի արդյունքում ներդրվել են ազդարարման համակարգին առնչվող հրահանգով նախատեսված նվազագույն պահանջները: Միևնույն ժամանակ, որոշ երկրներում նախատեսվել են ազդարարների պաշտպանությանն ուղղված հավելյալ պահանջներ:

i. ԲԵԼԳԻԱՅԻ ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Բելգիայում ազդարարների պաշտպանությանն ուղղված օրենքը հատուկ ուշադրության է արժանի այն նպատակով, որ վերջինս ԵՄ հրահանգից շեղվում է այն առումով, որ այն հասցեագրված է միայն մասնավոր հատվածի կազմակերպություններին: Օրենքով սահմանված է, որ ներքին ազդարարման և դրա քննության ուղիներ և ընթացակարգեր ստեղծելու պարտավորությունը տարածվում է 50-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների վրա: Վերջիններս, պարտավորված են ազդարարման ընթացակարգերը ստեղծելուց առաջ խորհրդակցեն համապատասխան «սոցիալական գործընկերների» հետ, որոնք, կախված կոնկրետ

հանգամանքներից, կարող են ներառել աշխատանքային խորհուրդներ²⁶ կամ աշխատողների ներկայացուցիչներ: Բացի այդ, համապատասխան ռիսկի գնահատումից հետո՝ հաշվի առնելով կազմակերպությունների գործունեության բնույթը և դրանից բխող ռիսկի մակարդակը, մասնավորապես՝ շրջակա միջավայրի և հանրային առողջության նկատմամբ, Բելգիայի թագավորը կարող է Նախարարների խորհրդում քննարկված հրամանագրով սահմանել 50-ից պակաս աշխատող ունեցող մասնավոր հատվածի սուբյեկտների համար ևս ներքին ազդարարման ուղիներ և ընթացակարգեր սահմանելու պարտավորություն:

Իրավաբանական անձի՝ ներքին ազդարարումներ ստանալու և դրանց հետագա ընթացքին հետամուտ լինելու պատասխանատու անձի կամ ծառայության ընտրությունը կախված է կազմակերպության կառուցվածքից, սակայն նշյալ գործառույթի իրականացման ժամանակ ամեն դեպքում պետք է երաշխավորվի նրանց անկախությունը և շահերի բախման բացակայությունը: Ազդարարման ուղիները կարող են կառավարվել ներքին կարգով ազդարարման պատասխանատու անձի կողմից կամ երրորդ կողմի կողմից: Երկու դեպքում էլ անձնական տվյալների մշակման համար պատասխանատու է համարվում իրավաբանական անձը: Օրենքով նախատեսված գաղտնիության պահպանման, անկախության և այլ երաշխիքներն ու պահանջները տարածվում են նաև երրորդ կողմերի վրա, որոնք լիազորված են կառավարել ազդարարման ուղիները իրավաբանական անձի անունից: 250-ից պակաս աշխատող ունեցող իրավաբանական անձինք կարող են կիսել ռեսուրսները՝ կապված ազդարարումների ստացման և հնարավոր քննությունների հետ, որի դեպքում կրկին պահպանվում են կազմակերպությունների՝ գաղտնիության պահպանման, հետադարձ կապի ապահովման և հայտնաբերված խախտումը վերացնելու պարտավորությունները:

Ազդարարման և դրա քննության ուղիներ և ընթացակարգերը ներառում են հետևյալը.

- Ազդարարումների ստացման ուղիներ, որոնք նախագծված, հաստատված և կառավարվում են անվտանգ ձևով, որը երաշխավորում է ազդարարի և ազդարարմամբ նշված ցանկացած երրորդ կողմի ինքնության գաղտնիությունը, և որը կանխում է չլիազորված անձնակազմի մուտքը նշված ուղիներ: Այս ուղիները թույլ են տալիս ազդարարում ներկայացնել գրավոր կամ բանավոր, կամ երկու տարբերակի մեկտեղմամբ: Ազդարարումները կարող են ներկայացվել բանավոր հեռախոսի միջոցով կամ ձայնային հաղորդագրությունների այլ

²⁶ Աշխատանքային խորհուրդը միավորում է, որը ներկայացնում է աշխատակիցների շահերը կազմակերպության ներսում, գործում է արհմիություններին առընթեր և կարող է ստեղծվել կազմակերպության աշխատակիցների կամ արհմիության նախաձեռնությամբ:

համակարգերով, իսկ ազդարարի խնդրանքով՝ ողջամիտ ժամկետում նախատեսված անձնական հանդիպման միջոցով.

- Ազդարարումները ստանալուց հետո յոթ օրվա ընթացքում ազդարարին հասցեագրված տեղեկանք ազդարարումը ստանալու վերաբերյալ.
- Ազդարարումների պատասխանատու անձի (կառավարչի) նշանակում, որը կարող է լինել նույն անձը կամ նույն ստորաբաժանումը, ով ստանում է ազդարարումները, և ով կապ կպահպանի ազդարարի հետ և, անհրաժեշտության դեպքում, նրանից լրացուցիչ տեղեկություններ կխնդրի և կտրամադրի հետադարձ կապ.
- Ազդարարման կառավարչի կողմից ազդարարման հետագա պատշաճ ընթացքի ապահովում, ներառյալ՝ անանուն ազդարարումների դեպքում, որի նախատեսումը պարտադիր է 250 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների համար:
- Հետադարձ կապ տրամադրելու ողջամիտ ժամկետ, որը չի գերազանցում երեք ամիսը ազդարարումը ստանալուց հետո, կամ, ազդարարին հասցեագրված՝ ազդարարումը ստանալու վերաբերյալ տեղեկանքի բացակայության պարագայում, եռամսյա ժամկետը հաշվարկվում է ազդարարումը ներկայացնելուց հետո յոթնօրյա ժամկետի ավարտից հետո.
- Արտաքին ազդարարման ներպետական պատասխանատու մարմիններին և, անհրաժեշտության դեպքում, ԵՄ այլ հաստատություններին, մարմիններին կամ գործակալություններին արտաքին ազդարարման ընթացակարգերի վերաբերյալ հստակ և հանրամատչելի տեղեկատվության տրամադրում:

Իրավասու մարմինները, խորհրդակցելով ազդարարման կենտրոնական պատասխանատու մարմնի հետ հետ, կարող են կանոնակարգով կամ շրջաբերականով սահմանել վերոնշյալ տարրերը, իսկ հակառակ պարագայում՝ դրանք կարող են սահմանվել Բելգիայի թագավորի հրամանագրով: Նշյալ կանոնակարգերը և շրջաբերականները ենթակա են պարտադիր հրապարակման համապատասխան իրավասու մարմինների պաշտոնական կայքերում, իսկ դրանցով սահմանված պահանջները ենթակա են պարտադիր կատարման իրավաբանական անձանց կողմից: Մասնավոր հատվածի իրավաբանական անձանց տարբեր տեսակներ ներկայացնող ասոցիացիաները և այլ մարմինները կարող են մշակել վարքագծի կանոններ, փոփոխել կամ ընդլայնել դրանք օրենքի կիրառման եղանակները, մասնավորապես՝ ներքին ազդարարման և դրա մոնիտորինգի ընթացակարգերի բաղադրիչները հստակեցնելու նպատակով: Բացի այդ, իրավասու մարմինները, խորհրդակցելով ազդարարման կենտրոնական պատասխանատու մարմնի հետ, խրախուսում են վարքագծի կանոնների մշակումը, որը նպատակ

ունի նպաստել օրենքի պատշաճ կիրառմանը՝ հաշվի առնելով տարբեր ոլորտային առանձնահատկությունները և միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների հատուկ կարիքները:

Կախված ոլորտից, որում կատարվել է խախտումը, Բելգիայի կառավարության համար սահմանվում են արտաքին ազդարարման տարբեր իրավասու մարմիններ, իսկ սլոյակ ոլորտում մարմնի բացակայության դեպքում՝ որպես կենտրոնական իրավասու մարմին հանդես է գալիս Բելգիայի դաշնային օմբուդսմենը:

Օրենքով սահմանված են նաև արտաքին ազդարարման ընթացակարգի բաղադրիչները՝ ազդարարումների ստացման, դրանց քննության, հետադարձ կապի ապահովման, աշխատակազմի վերապատրաստման, գաղտնիության պահանջների պահպանման, իրավասու մարմինների կայքերում ազդարարների իրավունքների և այլ անհրաժեշտ տեղեկատվության հրապարակման և այլնի մասին, որոնք, ըստ էության, համընկնում են հանրային ոլորտում ստացված արտաքին ազդարարումներին առնչվող ԵՄ պահանջների հետ ²⁷, հետևաբար ներկայացված են «Ազդարարման եղանակների կատարելագործում» փորձագիտական վերլուծությամբ:

ii. ԵՄ ԱՅԼ ԱՆՂԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Մի շարք երկրներում, այդ թվում՝ Ավստրիա,²⁸ Չեխիա,²⁹ Գերմանիա,³⁰ Հունաստան,³¹ Իռլանդիա,³² մասնավոր ոլորտի կազմակերպությունների կողմից ներքին ազդարարման ընթացակարգեր

²⁷ Law on the protection of persons who report violations of Union or national law found within a legal entity of the private sector (Loi sur la protection des personnes qui signalent des violations au droit de l'Union ou au droit national constatées au sein d'une entité juridique du secteur privé), adopted: November 28, 2022, Sections 3-4, available at: <https://www.ejustice.just.fgov.be/eli/loi/2022/11/28/2022042980/moniteur#top>.

²⁸ Whistleblower Protection Act (HinweisgeberInnenschutzgesetz), adopted: February 16, 2023, Article 1, clause 3, available at: https://www.parlament.gv.at/dokument/XXVII/BNR/695/fname_1517294.pdf.

²⁹ Whistleblower Protection Act no. 171/2023, adopted: June 2, 2023, Section 2, available at: <https://www.zakonyprolidi.cz/cs/2023-171>.

³⁰ Whistleblower Protection Act (Gesetz für einen besseren Schutz hinweisgebender Personen sowie zur Umsetzung der Richtlinie zum Schutz von Personen, die Verstöße gegen das Unionsrecht melden - Hinweisgeberschutzgesetz), Article 1, clause 12, adopted: May 12, 2023, available at: <https://www.recht.bund.de/bgb/1/2023/140/VO.html>.

³¹ Law No 4990/2022 on the protection of persons reporting violations of Union law, adopted: November 11, 2022, Article 9, available at: <https://www.lawspot.gr/nomikes-pliروفories/nomothesia/nomos-4990-2022>.

³² Protected Disclosures Act 2014 (Revised), adopted: July 8, 2014, Part 2, Section 6, available at: <https://revisedacts.lawreform.ie/eli/2014/act/14/front/revised/en/html>

ստեղծելու պարտավորությունը և նախատեսում է ԵՄ հրահանգով սահմանված նվազագույն պահանջներից խիստ պահանջներ, որի համաձայն պարտավորությունը տարածվում է հետևյալ ոլորտների կազմակերպությունների վրա՝ անկախ աշխատողների կամ քաղաքացիական ծառայողների թվից՝

- ֆինանսական ծառայություններ, ապրանքներ և շուկաներ,
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելում,
- տրանսպորտի անվտանգություն,
- շրջակա միջավայրի պահպանություն,
- այլ ոլորտներ:

Բացի այդ, Իտալիայի օրենսդրության համաձայն՝ մասնավոր կազմակերպությունները, որոնք օրենքով նախատեսված կարգով կամավոր կերպով ներդրել են համապատասխանության ծրագրեր կորպորատիվ հանցագործությունները կանխելու նպատակով, և ունեն ազդարարման ներքին ընթացակարգեր նախատեսելու պարտավորություն՝ անկախ աշխատողների թվից:³³ Նմանապես, Մալթայում, նման պարտավորությունը տարածվում է ցանկացած կամավոր կազմակերպության վրա, որը տարեկան ստանում է ավելի քան 500,000 եվրո հանրային դրամահավաքներից և այլ նվիրատվություններից ³⁴ , իսկ Իսպանիայում՝ կուսակցությունների, արհեստակցական միությունների, գործարար կազմակերպությունների, ինչպես նաև՝ հանրային միջոցներով ստեղծված հիմնադրամների վրա:³⁵

Մի շարք երկրներում օրենքով նախատեսված է 50 և ավելի աշխատող ունենալու շեմի հաշվարկի բանաձևը: Օրինակ՝ Ֆրանսիայում հաշվարկը կախված է կազմակերպության գործունեության նախորդ երկու ֆինանսական տարիներին աշխատողների ամսական միջին թվաքանակից:³⁶

Իսպանիայում ներքին ազդարարման ընթացակարգերը ենթակա են պաշտոնապես հաստատման կազմակերպությունների ղեկավարության (օրինակ՝ տնօրենների խորհուրդ) կողմից:

³³ Legislative Decree No 24/2023, adopted: 10 March, 2023, Article 2, available at: <https://www.normattiva.it/uri-res/N2Ls?urn:nir:stato:decreto.legislativo:2023:024>

³⁴ Protection of the Whistleblower Act VIII (CAP 527 of the Laws of Malta), Second Schedule, Article 12, adopted: September 15, 2013, available at: <https://legislation.mt/eli/cap/527/eng/pdf>.

³⁵ Law No 2/2023 (Ley 2/2023, de 20 de febrero, reguladora de la protección de las personas que informen sobre infracciones normativas y de lucha contra la corrupción), adopted: February 20, 2023, Title III, available at: <https://www.boe.es/buscar/act.php?id=BOE-A-2023-4513>.

³⁶ Social Security Code, Article L130-1, available at: https://www.legifrance.gouv.fr/codes/article_lc/LEGIARTI000038610270.

Նիդեռլանդներում կազմակերպությունը, որը պարտավոր է ստեղծել ներքին ազդարարման ընթացակարգեր, սակայն չունի աշխատանքային խորհուրդ կամ աշխատողների ներկայացուցիչների ասոցիացիա (և չունի նաև նման պարտավորություն), պարտավոր է ստանալ իր աշխատողների կեսից ավելիի համաձայնությունը իր ներքին ազդարարման ընթացակարգի ստեղծման ժամանակ: Այս համաձայնությունը չի պահանջվում, եթե ներքին ազդարարման ընթացակարգերն արդեն իսկ կարգավորվում են կոլեկտիվ աշխատանքային պայմանագրով:³⁷

Բուլղարիայում օրենքը սահմանում է, որ եթե կազմակերպությունն ունի տվյալների պաշտպանության պատասխանատու, ապա վերջինս հանդես է գալիս նաև որպես ազդարարման հարցերով պատասխանատու անձ: Ստացված ազդարարումների քննության հետ կապված սահմանված է, որ ազդարարման հասցեատերերին կազմակերպությունները, որը ներառում է թե՛ հանրային, թե՛ մասնավոր ոլորտը, պարտավոր են տրամադրել (i) իրենց սեփական բացատրությունները և ապացույցները ներկայացնելու հնարավորություն և (ii) հավաքագրված ապացույցների դեմ առարկելու հնարավորություն յոթ օրվա ընթացքում: Նաև սահմանված է, որ կազմակերպությունները վերանայում են իրենց ներքին ազդարարման կանոնները առնվազն երեք տարին մեկ անգամ, կատարում են օրենքի կիրառման պրակտիկայի վերլուծություն և, ըստ անհրաժեշտության, թարմացնում իրենց կանոնները:

Կազմակերպությունների համար սահմանված է ստացված ազդարարումների ոչ հրապարակային ռեզիստր ստեղծելու և վարելու պարտավորություն, որը պարունակում է տեղեկատվություն՝ (i) ազդարարի մասին. (ii) ազդարարման ներկայացման ամսաթիվը. (iii) ազդարարման հասցեատիրոջ վերաբերյալ տեղեկատվություն՝ առկայության դեպքում. (iv) ենթադրյալ խախտման ամփոփագիրը. (v) ցանկացած կապ ազդարարման և կատարված այլ ազդարարումների միջև. (vi) ազդարարին ազդարարման հետագա ընթացքի վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունները. (vii) ձեռնարկված հետագա գործողությունները. (viii) ազդարարման ստուգումների արդյունքները. և (ix) ազդարարման պահպանման ժամկետը: Իրավասու մարմինը պարտավոր է հստակեցնել այս գրանցամատյանի վարման կարգը և կարող է սահմանել գրանցամատյանի պահպանման հատուկ ժամկետներ: Կազմակերպությունների համար սահմանված է այս ռեզիստրից իրավասու մարմնին պարբերաբար վիճակագրական

³⁷ Whistleblowers Protection Act No 147, adopted: April 14, 2016, Chapter 1, Section 2, Article 2, available at: <https://www.wetbeschermingklokkenluiders.nl/wetstraject/wetstekst>.

տեղեկատվություն ներկայացնելու պարտավորություն: ³⁸ Նմանապես, Մլովենիայում թե՛ հանրային, թե՛ մասնավոր ոլորտի կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր տարի իրենց ստացած ազդարարումների վերաբերյալ վիճակագրություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, որը ենթակա է հրապարակման հանձնաժողովի կողմից ներքին և արտաքին ազդարարումների տարեկան հաշվետվության շրջանակներում մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը:³⁹

Մլովակիայում ազդարարների պաշտպանությամբ զբաղվող կենտրոնական մարմին՝ Ազդարարների պաշտպանության գրասենյակին վերապահված են մասնավոր ոլորտում ազդարարման համակարգին առնչվող մի շարք լիազորություններ: Մասնավորապես, մարմինն իրականացնում է վերահսկողություն ինչպես հանրային հատվածի, այնպես էլ՝ մասնավոր հատվածի կազմակերպությունների կողմից ներքին ազդարարման համակարգերի ստեղծման և հասանելի դարձնելու՝ օրենքով նախատեսված պահանջների պահպանման նկատմամբ, այդ նպատակի իրագործման համար օժտված է վարչաիրավական լիազորություններով, այդ թվում՝ իրավասու է կազմակերպություններից պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր և բացատրություններ, այդ թվում՝ վերջիններիս կողմից իրականացված ներքին քննության արդյունքները, ուսումնասիրել կոնկրետ գործով ազդարարման ընթացք տալու մեթոդը ու դրա արդյունավետությունը և գործատուին խորհուրդ տալ միջոցներ ձեռնարկել օրենքի համապատասխանությունն ապահովելու նպատակով, այդ թվում՝ աջակցել գործատուներին իրենց կազմակերպություններում ազդարարման ներքին մեխանիզմների նախագծման/ներդրման և ազդարարման բարդ գործերի քննության հարցում, ազդարարների պաշտպանության նպատակով կազմակերպություններից ստանալ հաստատման հարցում՝ ազդարարի նկատմամբ այնպիսի աշխատանքային ակտի ընդունման կապակցությամբ, որը կարող է որակվել որպես վնասակար գործողություն, և ծանուցել գործատուին, որ վերջինիս կողմից ազդարարի հանդեպ կիրառվելիք աշխատանքային ակտը կարող է խախտել օրենքի դրույթները, ինչպես նաև օրենքի պահանջների խախտման համար նշանակել տույժեր և տուգանքներ:⁴⁰ Նիդեռլանդների ազդարարման հարցերով իրավասու մարմինը ևս օժտված է ինչպես հանրային հատվածի, այնպես էլ՝ մասնավոր հատվածի

³⁸ Law on the Protection of Whistleblowers or Public Disclosures of Infringements, adopted: January 27, 2023, Chapter 2, Section 1, available at: <https://dv.parliament.bg/DVWeb/showMaterialDV.jsp?idMat=185482>

³⁹ Whistleblower Protection Act 301 (Zakon o zaštiti prijaviteljev (ZZPri), adopted: January 27, 2023, Article 26, available at: <https://www.uradni-list.si/glasilo-uradni-list-rs/vsebina/2023-01-0301?sop=2023-01-0301>.

⁴⁰ Act No. 54/2019 on the Protection of Whistleblowers of Anti-Social Activities and on Amendments to Certain Acts, Article 1, clauses 12, 13, adopted: January 30, 2019, available at: <https://www.zakonypreludi.sk/zz/2019-54>.

կազմակերպությունների կողմից ներքին ազդարարման համակարգերի ստեղծման և հասանելի դարձնելու՝ օրենքով նախատեսված պահանջների պահպանման նկատմամբ որոշակի համանման վարչախրավական գործիքակազմով: Հունաստանում մասնավոր կազմակերպությունները պարտավոր են ծանուցել Աշխատանքի տեսչությանը կամ իրավասու մարմինն իրենց կողմից ազդարարման պատասխանատու անձ նշանակելու մասին՝ նշանակելուց հետո երկու ամսվա ընթացքում: Իրավասու մարմինը կարող է որոշել համապատասխան տուգանքի չափը հաշվարկելու չափանիշներ և տուգանել կազմակերպություններին ներքին ազդարարման ընթացակարգեր սահմանելու պարտավորությունը չկատարելու համար:

Ռումինիայում, եթե կազմակերպությունը, ի վերջո, որոշում է կազմակերպել կարգապահական ժողով՝ ազդարարի դեմ պատասխանատվության միջոց կիրառելու նպատակով (ազդարարման արդյունքում), ազդարարը կարող է պահանջել, որ կազմակերպությունը հրավիրի մամուլին, արհմիության կամ մասնագիտական ասոցիացիայի ներկայացուցչին, կամ աշխատակիցների ներկայացուցչին: Ազդարարի խնդրանքով կազմակերպությունը պետք է հանդիպման անցկացման մասին հայտարարի իր կայքում՝ հանդիպման կայացումից առնվազն երեք աշխատանքային օր առաջ: Եթե կազմակերպությունը կարգապահական պատասխանատվություն է ձեռնարկում առանց այդ պահանջները կատարելու, ապա ազդարարի դեմ ձեռնարկված գործողությունը անվավեր է:⁴¹

Գ) ԵՄ ԱՐԿԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Արևելյան գործընկերության (այսուհետ՝ ԱԳ) երկրներից հատուկ ուշադրության է արժանի Ուկրաինայի փորձը: Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Ուկրաինայի օրենքի՝ կազմակերպության ղեկավարությանը կամ հակակոռուպցիոն գործերի համար պատասխանատու ներքին հատուկ ստորաբաժանմանն ազդարարելու ապահով և գաղտնի կամ անանուն ներքին ընթացակարգեր սահմանելու պարտականությունը տարածվում է հետևյալ խմբերի մասնավոր սուբյեկտների վրա՝

⁴¹ Law no. 361/2022 on the protection of whistleblowers in the public interest, adopted: December 13, 2022, Article 26, available at: <https://senat.ro/legis/PDF/2022/22L175PX.PDF>.

- հանրային իրավունքի մասնավոր սուբյեկտներ (այսինքն՝ մասնավոր սուբյեկտներ, որոնք ստեղծված են Ուկրաինայի պետական իշխանությունների կողմից);
- Պետական, մունիցիպալ և մասնավոր կազմակերպություններ, որտեղ (i) պետությունը կամ համայնքն ունի ավելի քան 50% բաժնեմասնակցություն, (ii) աշխատողների թվաքանակը կազմում է ավելի քան 50 անհատ, և (iii) վերջին տարեկան հաշվետվության ժամանակահատվածի ընդհանուր եկամուտը գերազանցում է 70 միլիոն ուկրաինական գրիվնան (մոտ 1,73 միլիոն եվրո);
- Մասնավոր սուբյեկտներ, որոնք մասնակցում են պետական գնումներին «Պետական գնումների մասին» Ուկրաինայի օրենքով սահմանված կարգով, եթե գնման ապրանքների/ծառայությունների արժեքը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն ուկրաինական գրիվնան (0,5 միլիոն եվրո):

Նման համակարգ կարող է ստեղծվել կամավոր հիմունքներով՝ ներքին համապատասխանության քաղաքականությունն ամրապնդելու նպատակով:

II. ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

1. Մասնավոր ոլորտում ներքին ազդարարման համակարգերը՝ իմպերատիվ նորմերի համատեքստում

2022 թվականի դեկտեմբերի 7-ին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում փորձեր կատարվեցին ազդարարման համակարգի օրենսդրությունը մասնավոր ոլորտի աշխատողների վրա տարածելու ուղղությամբ: Այդ նպատակով, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով «ազդարարում» եզրույթը սահմանվեց հետևյալ կերպ՝ *«ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի*

կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում սույն օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմին»:⁴²

Մինևույն ժամանակ, 4-րդ կետի համաձայն՝ «իրավասու մարմին» եզրույթը, որը սույն օրենքով սահմանված երաշխիքների ապահովմամբ պարտավոր է ընթացք տալ ազդարարմանը, տարածվում է հետևյալ սուբյեկտային կազմի վրա՝ «ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմին, պետական և համայնքային կազմակերպություն, հանրային նշանակության կազմակերպություն», իսկ 5-րդ կետով «հանրային նշանակության կազմակերպությունը» սահմանվում է որպես «հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություն»: Բացի այդ, օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ «Ներքին ազդարարումն սկսվում է ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին (բացառությամբ՝ մասնավոր ոլորտի կազմակերպությունների, որոնք չեն դասվում հանրային նշանակության կազմակերպությունների շարքին) հաղորդում ներկայացնելով»:

Նշյալից հետևում է, որ

ա) ներքին ազդարարումը սահմանափակվում է միայն պետական հատվածի աշխատողների համար, և ներդրված չէ մասնավոր ոլորտում ազդարարման համակարգ, ինչը մասնավոր հատվածի աշխատողներին զրկում է ներքին ազդարարման եղանակից օգտվելու հնարավորությունից, որի արդյունքում ազդարարման պաշտպանության մասին օրենսդրական դրույթները կարող են բավարար չափով չտարածվել մասնավոր հատվածի աշխատողների վրա: Մասնավորապես, չեն իրականացվել օրենսդրական համապատասխան փոփոխություններն արտացոլող փոփոխություններ համապատասխան ենթաօրենսդրական ակտերում, այն է՝ ՀՀ կառավարության «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» 2018 թվականի ապրիլի 12-ի N 439⁴³ և «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց ենթակա

⁴² «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2017 թվականի հունիսի 9-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131>:

⁴³ «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության No 439 որոշում, ընդունված՝ 2018 թվականի ապրիլի 12-ին, Հավելված 2, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=130444>:

մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը սահմանելու մասին» 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշումներում⁴⁴: Նշյալի արդյունքում չի ապահովվում ՀՀ օրենսդրության՝ ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 1.2. հենանիշին համապատասխանությունը, ըստ որի՝ ազդարարումը, հաղորդումների ներկայացման ընթացակարգերը և ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները սահմանող ցանկացած օրենսդրական դրույթ պետք է տարածվի, ի լրումն հանրային ոլորտի աշխատողների, նաև մասնավոր ոլորտի աշխատողների և պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների խորհրդի անդամների և աշխատողների վրա:

բ) օրենքի 6-րդ հոդվածում օգտագործվող *«բացառությամբ մասնավոր ոլորտի կազմակերպությունների, որոնք չեն դասվում հանրային նշանակության կազմակերպությունների շարքին»* եզրույթը տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տալիս, որի արդյունքում պարզ չէ, արդյոք ներքին ազդարարմանն ուղղված ընթացակարգերի սահմանմանն ուղղված իրավակարգավորումները տարածվում են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների վրա, թե՛ ոչ: Նշյալի արդյունքում, ՀՀ ազդարարման օրենսդրությունը չի համապատասխանում ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 2.1. հենանիշով սահմանված պահանջին, քանի որ առկա չէ հստակ և միանշանակորեն ամրագրված օրենսդրական պահանջ առ այն, որ ազդարարման ոլորտի, ներառյալ՝ ներքին ազդարարմանն ուղղված ընթացակարգերի սահմանմանն ուղղված իրավակարգավորումները տարածվում են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների վրա:

Ինչ վերաբերվում է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա Ռազմավարության նախագծում որոշակի անդրադարձ կատարվել է մասնավոր ոլորտում ազդարարման արդյունավետ իրականացման հիմնախնդիրներին, մասնավորապես՝ պետության կողմից գործարկված մասնավոր հատվածում խախտումների վերաբերյալ ազդարարումների

⁴⁴ «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 272-Ն որոշում, ընդունված՝ 2018 թվականի մարտի 15-ին, Հավելված 2, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180232>:

համակարգի բացակայությանը, իսկ Ռազմավարության գործողությունների ծրագրի նախագծով, մասնավորապես՝ «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության շրջանակներում նախատեսվել է մասնավոր կազմակերպությունների հետ կապված հաղորդումների ներկայացման և դրանց ընթացք տալու առանձնահատկությունների հստակեցումը:⁴⁵

Բացի այդ, հարկ է նշել, որ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարությունը համակարգող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ) կողմից գործարկվում է «Բիզպաշտպան» բիզնես ոլորտի առցանց ազդարարման հարթակը, որը հնարավորություն է տալիս բիզնեսի ներկայացուցիչներին հայտնել բիզնես ոլորտում հանդիպած կոռուպցիոն դեպքերի և այլ հարակից խնդիրների մասին՝ միաժամանակ երաշխավորելով վերջիններիս անվտանգությունը և անանունությունը՝ համացանցային հաղորդակարգի հասցեն (Internet Protocol Address) ծածկագրելու միջոցով: Մինևույն ժամանակ, ազդարարման հարթակը չունի օրենսդրական որևէ կարգավիճակ:

2. Մասնավոր ոլորտում ներքին ազդարարման համակարգերը՝ կամավոր միջոցառումների խթանման և հակակոռուպցիոն համապատասխանության ապահովման համատեքստում

Ա) ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱԵՔՍՈՒՄ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ համատեղ մշակվել և 2010 թվականի դեկտեմբերի 30-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» N 1769-Ա որոշումը:⁴⁶ Կանոնագրքի համաձայն՝ վերջինս տարածվում է ցուցակված և պետական ընկերությունների վրա՝ Ֆոնդային բորսայի կանոններով և/կամ օրենսդրությամբ սահմանված

⁴⁵ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, շրջանառվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, քննարկվել է 13.07.2023 - 21.08.2023թթ.-ին, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/5986>:

⁴⁶ ՀՀ կառավարության «ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» N 1769-Ա որոշում, ընդունված՝ 2010 թվականի դեկտեմբերի 30-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65200>:

դեպքերում, իսկ բանկերը, ապահովագրական ընկերությունները և իրավաբանական անձ հանդիսացող ներդրումային ֆոնդերը և այլ ընկերությունները՝ Կանոնագիրքը կարող են կիրառել սեփական նախաձեռնությամբ: Մասնավորապես, կանոնագիրքը տարածվում է ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի հունիսի 23-ին N 881-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված 50 տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների վրա:⁴⁷ Բացի այդ, Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից ընդունված «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման» կանոնների 47-րդ կետը սահմանում է, որ բորսայում արժեթղթերի ցուցակման համար դիմող կամ արժեթղթերը ցուցակած թողարկողը պետք է ընդունի և կիրառի առնվազն ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագիրքը, եթե չի ընդունել և չի կիրառում կորպորատիվ կառավարման համարժեք կամ ավելի խիստ նորմեր»:⁴⁸

Կանոնագիրքը կիրառելի է ըստ «հետևիք կամ բացատրիք» սկզբունքի, համաձայն որի ընկերությունները ներկայացնում են տարեկան հայտարարագիր Կանոնագրքի դրույթներին համապատասխանելու մասին, ինչպես նաև որևէ դրույթի չհամապատասխանելու դեպքում՝ բացատրություն չհամապատասխանելու պատճառների մասին: Կանոնագրքի դրույթներին հետևելու և իրենց համապատասխանության մակարդակի մասին տարեկան հաճախականությամբ հայտարարելու պարտավորությունը իրականացվում է տարեկան հաշվետվությունները ընկերությունների կայքէջում հրապարակելու միջոցով:

Մինևույն ժամանակ, նշյալ կանոնագիրքը թարմացված չէ և ընկերությունների խորհրդի վրա դրված չէ կոռուպցիոն ռիսկերը կառավարելու հատուկ պարտականություն, ինչն արձանագրված է նաև ՏՀԶԿ-ի 5-րդ փուլի գնահատման պիլոտային զեկույցում:⁴⁹ Վերջինս պարունակում է ազդարարման վերաբերյալ ընդհանրական կարգավորում, այն է՝ խորհրդի պարտականությունը՝ մշակել վարքագծի կանոններ՝ խորհրդի անդամներին, ղեկավարությանը և աշխատողներին վերաբերվող այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսին են, ի թիվս այլոց, «ահագանգումները»

⁴⁷ ՀՀ կառավարության «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների ցանկին և Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունման ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 881-Ն որոշում, ընդունված՝ 2011 թվականի հունիսի 23-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84467>:

⁴⁸ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման» կանոններ, Նոր խմբագրություն, ընդունված՝ 2019 թվականի հունվարի 17-ին, հասանելի է՝ https://www.cba.am/AM/laregulations/AMX%20Rules/amx_rule_listing_25.01.2019.pdf:

⁴⁹ OECD, Anti-Corruption Reforms in Armenia: Pilot 5th Round of Monitoring Under the OECD Istanbul Anti-Corruption Action Plan, 2022, pp.. 115-116 available at: <https://doi.org/10.1787/e56cafa9-en>:

և վարքագծի կանոնների խախտման մասին հաղորդելը և այդ մասին հաղորդելու գաղտնիության պահպանումը:

Ներկա պահին N 1769-Ա ՀՀ կառավարության որոշման նախագիծը գտնվում է վերանայման փուլում: Մասնավորապես, կորպորատիվ կառավարման կանոնագրքի արդիականացման անհրաժեշտությամբ պայմանավորված դեռևս 2019 թվականի հոկտեմբերի 21-ին հանրային քննարկման դրվեց կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի նախագիծը⁵⁰, որը մինչ օրս չի ընդունվել: Վերջինս պարունակում է կոռուպցիոն ռիսկերի կառավարման կառուցակարգեր, որի շրջանակներում սահմանում է, որ համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձն, ի թիվս այլ գործառույթների, *«կազմակերպության ներքում նպաստում է ազդարարման կառուցակարգերի ձևավորմանը, որոնք հնարավորություն են տալիս կազմակերպության աշխատակիցներին (ներառյալ՝ գործադիր մարմնի անդամներին), դրանց ներկայացուցչական մարմիններին (առկայության դեպքում) և արտաքին շահակիցներին խորհրդին կամ այլ մարմնի գրավոր կամ բանավոր հաղորդել (ազդարարել) կազմակերպությունում տեղ գտած ոչ իրավաչափ գործողությունների և վարվելակերպի, այդ թվում՝ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման, կամ էթիկայի կանոնների հետ կապված խախտման, կամ կազմակերպության շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների մասին»:*

Մինևույն ժամանակ, առկա չեն կանոնագրքի կիրառման նկատմամբ վերահսկողության իրականացման գործուն կառուցակարգեր: 50 տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների դեպքում՝ դրանց սեփականատեր նախարարությունները կարող են վերահսկել նրանց գործունեությունը արտաքին աուդիտի միջոցով:

Առկա են որոշակի կարգավորումներ թողարկող կազմակերպությունների մասով, մասնավորապես՝ Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից ընդունված «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման» կանոնների 79-րդ կետը սահմանում է, որ արժեթղթերն առևտրին թույլատրող մարմինը, այն է՝ Հայաստանի ֆոնդային բորսայի գործադիր մարմնի ղեկավարը, իրավունք ունի մերժել արժեթղթերի ցուցակումը այն դեպքում, երբ չեն պահպանվել արժեթղթերի ցուցակման համար նախատեսված պայմանները, իսկ 83-րդ կետի համաձայն՝ թողարկող կազմակերպությունները Հայաստանի ֆոնդային բորսային պարտավորվում են ներկայացնել

⁵⁰ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N1769-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, շրջանառվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից, քննարկվել է 21.10.2019 - 05.11.2019թթ.-ին, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/2015>:

տարեկան հաշվետվությունները՝ հաստատված անկախ աուդիտորական եզրակացությամբ, միջանկյալ հաշվետվությունները և բացահայտված էական տեղեկությունների փոփոխությունները (էական փաստերի և տեղեկությունների հաշվետվություններ): Այնուամենայնիվ, գործող օրենսդրությամբ առկա չէ հստակ և միանշակորեն պահանջ առ այն, որ Բորսան վերահսկում է ցուցակված ընկերությունների փաստացի համապատասխանությունը կանոնագրքին (օրինակ՝ ինչպես է իրականացվում ռիսկերի կառավարումը, խորհրդի քանի անդամ է անկախ, որո՞նք են խորհրդի և ղեկավարության պարտականությունները):

Հաշվի առնելով, որ ցուցակված ընկերությունների մեծամասնությունը բանկեր են, նրանց նկատմամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-6-րդ կետերը նախատեսում են կորպորատիվ կառավարման և խորհրդի վերահսկողության ավելի խիստ չափորոշիչներ, ներառյալ՝ պարտադիր ներքին վերահսկողության համակարգը:⁵¹ Միաժամանակ, ՀՀ կենտրոնական բանկը, հանդիսանում է բանկերի վերահսկող մարմինը ՀՀ-ում, չի իրականացնում ցուցակված ընկերություններ հանդիսացող բանկերի՝ կանոնագրքի համապատասխանության նկատմամբ վերահսկողություն: Բացի այդ, ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի պահպանության և արժեթղթերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների հաշվառումն և փոխանցումն իրականացվում է վերջինիս կողմից, եթե դրանք իրականացվել են օրենքներով և կանոնակարգերով (ներառյալ՝ հիմնադիր փաստաթղթեր և կորպորատիվ ընթացակարգեր) սահմանված նորմերին համապատասխան: Միաժամանակ, առկա չեն դեպոզիտարիայի կողմից գործնականում կորպորատիվ ընթացակարգերի պահպանման նկատմամբ վերահսկողությունը փաստող ապացույցներ:

Արդյունքում, թեև որոշ մարմիններ և կազմակերպություններ օժտված են որոշակի իրավասություններով՝ իրականացնելու կանոնագրքի պահպանման նկատմամբ վերահսկողություն, գրասենյակային վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ առկա չէ դրա գործնական իրականացումը փաստող որևէ ապացույց:

Այս համատեքստում հատկանշական է, որ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծով անդրադարձ է կատարվում վերոնշյալ խնդիրներին և առաջարկվում է՝

⁵¹ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 1996 թվականի հունիսի 30-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164974>:

- «Ապահովել ՏՀԶԿ G20-ի հակակոռուպցիոն պահանջներին համապատասխան Կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի ընդունումը, դրա կիրառման վերահսկողության մեխանիզմների սահմանումը, և վերջինիս կիրառումը խրախուսելու նպատակով միջոցառումների իրականացումը: Կանոնագրքի իրացման շրջանակներում անհրաժեշտ է, որ պետությունը ձևավորի անհրաժեշտ կառուցակարգեր՝ խրախուսելու մասնավոր ոլորտի ներկայացուցիչների կողմից այդ կառուցակարգերը ներդնելուն:
- Ապահովել պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում, բորսայում գրանցված թողարկող կազմակերպություններում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի սահմանումը, որը պետք է կրի ինպերատիվ բնույթ: Վերջիններիս համար առաջարկվում է նոր կորպորատիվ կառավարման կանոնագրքի կիրառումը սահմանել որպես պարտադիր պահանջ»:

Բ) ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի 124-րդ հոդվածը սահմանում է. «Իրավաբանական անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իրավաբանական անձի մասնակիցները, բաժնետերերը կամ փայտերերը ձեռնարկել են ողջամտորեն անհրաժեշտ միջոցները սույն օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է»:⁵² Քանի որ ՀՀ-ում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը նոր է, դեռևս առկա չէ միասնական դատական պրատիկա առ այն, թե ինչպես դատարանի կողմից կգնահատվի հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի ներդրումը՝ որպես պատասխանատվությունը բացառող հանգամանք դիտարկելու տեսանկյունից:

Միաժամանակ, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվում է Քրեական օրենսգրքով Կանոնագրքի կիրառումը կիրառումը դիտարկել որպես իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառող կամ մեղմացնող հանգամանք:

⁵² ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված՝ 2021 թվականի մայիսի 5-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=181303>:

*Գ) ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

Գործող օրենսդրությամբ հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի առկայությունը չի դիտարկվում որպես առավելություն տվող չափանիշ պետական գնումների գործընթացի, պետություն-մասնավոր հատված գործընկերության, պետական աջակցության, հարկային կամ մաքսային արտոնությունների տրամադրման ժամանակ: Միաժամանակ, ՏՀԶԿ-ի 5-րդ փուլի գնահատման պիլոտային զեկույցի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ համապատասխանությունը կորպորատիվ կառավարման կանոնագրքին դիտարկվում է որպես առավելություն տվող չափանիշ պետական գնումների գործընթացում և ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) փոխհատուցման ծրագրերում:

Հատկանշական է, որ առնվազն 1 պետական աջակցության ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը՝ որպես առավելություն տվող չափանիշի սահմանմանն ուղղված իրավական ակտի նախագծի ընդունումը նախատեսված էր նախկին՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով, որը չի իրականացվել,⁵³ և վերջինս տեղափոխվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիր (նախագիծ):

*Դ) ՀԱՎԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

ՀՀ-ում վերջին տարիներին իրականացվել են որոշակի հավաքական գործողություններ և նախաձեռնություններ՝ ուղղված մասնավոր ոլորտի կողմից կամավոր եղանակով հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի ներդրմանը: Այսպես.

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կենտրոնի (CIPE) աջակցությամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի խթանում և բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում Երևանում և Հայաստանի 4

⁵³ ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, ընդունված՝ 2019 թվականի հոկտեմբերի 3-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168051>:

մարզերում՝ Լոռիում, Սյունիքում, Գեղարքունիքում, Շիրակում թվով 26 փոքր և միջին ձեռնարկություններ ընդունել են «Բիզնեսում բարեվարքության վերաբերյալ» հայտարարություն և հակակոռուպցիոն քաղաքականություն՝ ստանձնելով հանձնառություն՝ իրականացնելու գործողություններ հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի բաղադրիչների մասով, այդ թվում՝ ազդարարման:⁵⁴

Կորպորատիվ կառավարման կենտրոնի կողմից ձևավորված և առաջնորդվող «Բիզնես բարեվարքության ակումբի» շրջանակներում շուրջ 22 ընկերություններում ներդրվել են հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր:⁵⁵

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի շուրջ երկու տասնյակ անդամներ, այդ թվում՝ գործարար շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ և գործարար անդամակցությամբ զբաղվող կազմակերպություններ, ընդունել են Հայաստանում գործարար էթիկայի և համապատասխանության նախաձեռնության իրականացման նպատակով հայտարարություն, որի շրջանակներում պարտավորվել են նպաստել հակակոռուպցիոն արժեքների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը հասարակության մեջ, ներառյալ՝ գործարար կազմակերպությունների համար, ինչպես նաև՝ ամրապնդել և տարածել հանրության մեջ՝ ներառյալ գործարար ոլորտի ներկայացուցիչների շրջանում, հակակոռուպցիոն ծրագրերի և արժեքների կարևորությունը, հետևողական լինել գործնականում դրանց պատշաճ կատարմանը:⁵⁶ Հատկանշական է, որ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով (նախագիծ), զուգահեռաբար, առաջարկվում է նաև իրականացնել գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ներդրումը և հավաքական գործողությունները խթանող իրազեկման արշավներ, նախաձեռնություններ և վերապատրաստումներ՝ մասնագիտացված ՔՀԿ-ների հետ (գործարար շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ և գործարար անդամակցությամբ զբաղվող կազմակերպությունները) համագործակցությամբ:

⁵⁴ «Երևանում և ՀՀ 4 մարզերում մի շարք բիզնեսներ ընդունել են հակակոռուպցիոն քաղաքականություններ», Բիզպաշտպան կայք, հասանելի է՝ <https://bizprotect.am/am/news/show/239>:

⁵⁵ Կորպորատիվ կառավարման կենտրոնի պաշտոնական կայքէջ, հասանելի է՝ <https://corpgov.am/hy/projects/2021/08/09/business-integrity-club>:

⁵⁶ «Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի մի շարք անդամներ ընդունել են բարեվարքության հայտարարություն», Բիզպաշտպան կայք, հասանելի է՝ <https://bizprotect.am/am/news/show/241>:

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մասնավոր հատվածում ազդարարների պաշտպանության ապահովմանն ուղղված ձևաչափերի և ստանդարտների միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ձևավորվել է այդ նպատակին ուղղված 3 մոտեցում՝ ներպետական օրենսդրական դրույթների ընդունում, մասնավոր հատվածում կամավոր միջոցառումների խթանում՝ որպես կանոն հակակոռուպցիոն համապատասխանության համատեքստում կամ երկուսի մեկտեղում: Վերջին տարիներին միջազգային պրակտիկան զարգանում է այն ուղղությամբ, որ նախապատվությունը տրվում է մասնավոր հատվածում ազդարարների պաշտպանության ապահովմանն ուղղված պարտադիր օրենսդրական դրույթների սահմանմանը: Այս կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսվում է հստակ պահանջ՝ նախատեսել ներքին ազդարարման համակարգեր հետևյալ սուբյեկտային շրջանակի համար՝

ա) իրավաբանական անձինք, որոնց աշխատողների կամ հաստիքների քանակը գերազանցում է օրենքով նախատեսված շեմը, որպես կանոն՝ հիսունը.

բ) անկախ աշխատողների կամ հաստիքների քանակից՝ իրավաբանական անձինք, որոնք

(i) գործունեություն են ծավալում կոռուպցիոն կամ հանրային շահին պատճառվող վնասի տեսանկյունից բարձր ռիսկայնությամբ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ֆինանսական ծառայություններ, ապրանքներ և շուկաներ, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելում, տրանսպորտի անվտանգություն, շրջակա միջավայրի պահպանություն և այլն,

(ii) ձևավորվել են հանրային (պետական կամ համայնքային) միջոցներից, կամ որտեղ պետությունը կամ համայնքն ունի ավելի քան 50% բաժնեմասնակցություն, կամ որոնց տարեկան ֆինանսավորումը հանրային միջոցներից գերազանցում է օրենքով սահմանված որոշակի շեմը, կամ որոնց վերջին տարեկան հաշվետվության ժամանակահատվածի ընդհանուր եկամուտը գերազանցում է օրենքով սահմանված որոշակի շեմը.

(iii) մասնակցում են պետական գնումներին, եթե գնման ապրանքների/ծառայությունների արժեքը հավասար է կամ գերազանցում է օրենքով սահմանված որոշակի շեմը.

(iv) կամավոր կերպով ներդրել են համապատասխանության կառուցակարգեր:

Ներքին ազդարարման համակարգ սահմանելու օրենսդրական պահանջը բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրիչներից՝

ա) ներքին ազդարարման տարբեր (գրավոր և բանավոր) ուղիներ ստեղծելու պարտավորություն, այդ թվում՝ փոստի, հեռախոսի, ձայնային հաղորդակցության այլ համակարգերի, ֆիզիկական

բողոքների արկղերի, առցանց ձևաթղթերի, ինչպես նաև հաղորդում ներկայացնող անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում առկա (դեմառդեմ) հանդիպման (physical meeting) միջոցով.

բ) մասնագիտացված երրորդ կողմերի կողմից՝ իրավաբանական անձի անունից ներքին ազդարարումների ստացման արտապատվիրված (outsourced) ծառայությունների մատուցման հնարավորություն.

գ) ազդարարումների պատասխանատու անձի/ ստորաբաժանման նշանակման և վերջինիս կողմից ազդարարման պատշաճ ընթացքին հետևելու պահանջ.

դ) ազդարարումների ստացման հաստատումը ազդարարին ներկայացնելու առավելագույն ժամկետ (որպես կանոն՝ 7 օր) և ազդարարման հետագա ընթացքի վերաբերյալ ազդարարին ծանուցելու առավելագույն ժամկետ (որպես կանոն՝ 3 ամիս).

ե) ազդարարման հետ կապված հարաբերություններում անկախություն, գաղտնիություն և տվյալների պաշտպանության երաշխավորման պահանջ՝ ինչպես իրավաբանական անձի, այնպես էլ՝ մասնագիտացված երրորդ կողմի կողմից.

զ) արտաքին ազդարարման իրավասու մարմիններին արտաքին ազդարարման ընթացակարգերի վերաբերյալ հստակ և հանրամատչելի տեղեկատվության տրամադրման պահանջ.

է) օրենքի պատշաճ կիրառումն ապահովող տիպային չափորոշիչների նախատեսման պահանջ/հնարավորություն՝ հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները և միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների հատուկ կարիքները.

ը) ներքին ազդարարման ընթացակարգերի հաստատման պահանջ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կողմից՝ սոցիալական գործընկերների և աշխատողների ներկայացուցիչների համաձայնեցությունը ստանալուց հետո.

թ) իրավաբանական անձանց կողմից՝ ազդարարման հասցեատերերին իրենց սեփական բացատրությունները և ապացույցները ներկայացնելու և հավաքագրված ապացույցների դեմ առարկելու հնարավորության տրամադրման պահանջ.

ժ) ներքին ազդարարման կանոնների վերանայման նվազագույն ժամկետի սահմանման պահանջ (որպես կանոն՝ երեք տարի).

ի) իրավաբանական անձանց կողմից՝ ստացված ազդարարումների ոչ հրապարակային ռեզիստր ստեղծելու և վարելու, ինչպես նաև ազդարարման իրավասու կենտրոնական մարմնին պարբերաբար վիճակագրական տեղեկատվություն ներկայացնելու պահանջ.

յ) իրավաբանական անձանց կողմից՝ իրավասու կենտրոնական մարմնին ազդարարման պատասխանատու անձ նշանակելու մասին ծանուցման պահանջ (որպես կանոն՝ նշանակումից հետո երկու ամսվա ընթացքում):

խ) իրավասու կենտրոնական մարմնին մասնավոր ոլորտում ներքին ազդարարմանն առնչվող հետևյալ լիազորությունների/գործառույթների/գործիքակազմի վերապահում՝

(i) վերահսկողության իրականացում իրավաբանական անձանց կողմից ներքին ազդարարման համակարգերի ստեղծման և հասանելի դարձնելու, ազդարարման պատասխանատու անձանց նշանակման՝ օրենքով նախատեսված պահանջների պահպանման նկատմամբ.

(ii) աջակցության/խորհրդատվության տրամադրում իրավաբանական անձանց՝ օրենքի համապատասխանությունն ապահովելու նպատակով, այդ թվում՝ ներքին ազդարարման համակարգերի նախագծման/ներդրման և ազդարարման բարդ գործերի քննության հարցում.

(iii) ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանության գործիքակազմ՝ իրավաբանական անձանց կողմից՝ ազդարարի նկատմամբ որպես հնարավոր վնասակար գործողություն որակվող աշխատանքային ակտի ընդունման պահանջ՝ միմիայն իրավասու մարմնի հավանությունը ստանալուց հետո՝ այդ նպատակով նախնական հարցման ներկայացման միջոցով.

(iv) վիճակագրական տվյալների ստացում իրավաբանական անձանց ներքին ազդարարումների վերաբերյալ և դրանց հրապարակում տարեկան հաշվետվության շրջանակներում:

(v) իր լիազորությունների կատարման նպատակով իրավաբանական անձանցից անհրաժեշտ փաստաթղթեր և բացատրություններ պահանջելու, կոնկրետ գործով ազդարարմանն ընթացք տալու մեթոդն ու դրա արդյունավետությունն ուսումնասիրելու, ինչպես նաև օրենքի պահանջների խախտման համար տույժեր և տուգանքներ նշանակելու իրավասություն:

Ինչ վերաբերվում է ՀՀ օրենսդրության համապատասխանությանը միջազգային չափորոշիչներին, անհրաժեշտ է փաստել, որ չնայած 07.12.2022 թվականին կատարված՝ մասնավոր ոլորտի առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների վրա ազդարարման հետ կապված հարաբերությունների տարածմանն ուղղված օրենսդրական փոփոխություններին, ներքին ազդարարումը սահմանափակվում է միայն պետական հատվածի աշխատողների համար, ինչը մասնավոր հատվածի աշխատողներին զրկում է ներքին ազդարարման եղանակից օգտվելու հնարավորությունից: Նշյալի արդյունքում չի ապահովվում ՀՀ օրենսդրության համապատասխանությունը՝ ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 1.2. հենանիշին, ըստ որի՝ ազդարարումը,

հաղորդումների ներկայացման ընթացակարգերը և ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները սահմանող ցանկացած օրենսդրական դրույթ պետք է տարածվի նաև մասնավոր ոլորտի աշխատողների և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհրդի անդամների և աշխատողների վրա, ինչպես նաև՝ 2.1. հենանիշին, քանի որ առկա չէ հստակ և միանշանակորեն ամրագրված օրենսդրական պահանջ առ այն, որ ազդարարման ոլորտի, ներառյալ՝ ներքին ազդարարմանն ուղղված ընթացակարգերի սահմանմանն ուղղված իրավակարգավորումները տարածվում են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների վրա: Միաժամանակ, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծով նախատեսվել է մասնավոր կազմակերպությունների հետ կապված հաղորդումների ներկայացման և դրանց ընթացք տալու առանձնահատկությունների հստակեցումը:

Բացի այդ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարությունը համակարգող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործարկվում է «Բիզպաշտպան» բիզնես ոլորտի առցանց ազդարարման հարթակը, որը հնարավորություն է տալիս բիզնեսի ներկայացուցիչներին հայտնել բիզնես ոլորտում հանդիպած կոռուպցիոն դեպքերի և այլ հարակից խնդիրների մասին՝ երաշխավորելով վերջիններիս անվտանգությունը և անանունությունը: Միևնույն ժամանակ, ազդարարման հարթակը չունի օրենսդրական որևէ կարգավիճակ:

Ինչ վերաբերվում է հակակոռուպցիոն համապատասխանության ինստիտուտի խթանման համատեքստում մասնավոր ոլորտում ազդարարման համակարգերի ներդրման միջազգային փորձի վերլուծությանը, ապա իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

ա) կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունում և դրա կիրառման վերահսկողության մեխանիզմների սահմանում.

բ) որոշակի խումբ սուբյեկտների նկատմամբ (օրինակ՝ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններ, բորսայում գրանցված թողարկող կազմակերպություններ) կանոնագրքի և հատկապես՝ հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի կիրառման իմպերատիվ պահանջի սահմանում.

գ) խրախուսող նորմերի սահմանում՝ դիտարկելով կանոնագրքի և հատկապես՝ հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի առկայությունը՝ որպես իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառող կամ մեղմացուցիչ հանգամանք, ինչպես նաև՝ որպես առավելություն տվող չափանիշ պետական գնումների գործընթացի, պետություն-

մասնավոր հատված գործընկերության, պետական աջակցության, հարկային կամ մաքսային արտոնությունների տրամադրման ժամանակ:

Միջազգային չափանիշներին ՀՀ համապատասխանության առումով հարկ է նշել, որ ՀՀ գործող կորպորատիվ կառավարման կանոնագիրքը ենթակա է պարտադիր կիրառման խիստ սահմանափակ թվով սուբյեկտային շրջանակի նկատմամբ, թարմացված չէ և ընկերությունների խորհրդի վրա դրված չէ կոռուպցիոն ռիսկերը կառավարելու հատուկ պարտականություն՝ նախատեսելով ազդարարման վերաբերյալ խիստ ընդհանրական կարգավորում, ենթակա է պարտադիր կիրառման խիստ սահմանափակ թվով սուբյեկտային շրջանակի նկատմամբ, և առկա չեն կանոնագրքի կիրառման նկատմամբ վերահսկողության իրականացման գործունե կառուցակարգեր, ինչն արձանագրված է նաև ՏՀԶԿ-ի 5-րդ փուլի գնահատման պիլոտային զեկույցում: Ներկա պահին վերջինս գտնվում է վերանայման փուլում. նոր կանոնագրքի նախագիծը, որը մինչ օրս չի ընդունվել, պարունակում է կոռուպցիոն ռիսկերի կառավարման կառուցակարգեր, այդ թվում՝ ավելի համապարփակ կարգավորումներ ազդարարման ոլորտում: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվում է

նոր կանոնագրքի ընդունումը, դրա կիրառման վերահսկողության մեխանիզմների սահմանումը, վերջինիս կիրառումը խրախուսելու նպատակով միջոցառումների իրականացումը, ինչպես նաև՝ վերջինիս պարտադիր կիրառման պահանջի նախատեսումը պետական և համայնքային առևտրային կազմակերպությունների, բորսայում գրանցված թողարկող կազմակերպությունների համար՝ միտված կազմակերպություններում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի սահմանմանը:

ՀՀ-ում վերջերս ներդրվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը՝ նախատեսելով նաև պատասխանատվությունը բացառող հանգամանք՝ որպես այսպիսին դիտարկելով իրավաբանական անձի մասնակիցների, բաժնետերերի կամ փայտատերերի կողմից ողջամտորեն անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը՝ հանցանքի կատարումը կանխելու նպատակով: Միաժամանակ, միասնական դատական պրակտիկայի բացակայության պայմաններում, հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի առկայությունը՝ որպես իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառող կամ մեղմացնող հանգամանք նախատեսող հստակ պահանջի նախատեսման բացակայությունը՝ խնդրահարույց է, սակայն դրան ուղղված միջոցառում է նախատեսված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և

դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծով՝ որպես այդպիսին դիտարկելով կանոնագրքի կիրառումը:

Գործող օրենսդրությամբ հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի առկայությունը չի դիտարկվում որպես առավելություն տվող չափանիշ պետական գնումների գործընթացի, պետություն-մասնավոր հատված գործընկերության, պետական աջակցության, հարկային կամ մաքսային արտոնությունների տրամադրման ժամանակ: Միաժամանակ, ՏՀԶԿ-ի 5-րդ փուլի գնահատման պիլոտային զեկույցի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ համապատասխանությունը կորպորատիվ կառավարման կանոնագրքին դիտարկվում է որպես առավելություն տվող չափանիշ պետական գնումների գործընթացում և ԱԱՀ փոխհատուցման ծրագրերում: Հատկանշական է, որ առնվազն 1 պետական աջակցության ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը՝ որպես առավելություն տվող չափանիշի սահմանմանն ուղղված իրավական ակտի նախագծի ընդունումը նախատեսված էր նախկին՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով, որը չի իրականացվել, և վերջինս տեղափոխվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի (նախագիծ):

Թեև ՀՀ-ում վերջին տարիներին իրականացվել են որոշակի հավաքական գործողություններ և նախաձեռնություններ՝ ուղղված մասնավոր ոլորտի կողմից կամավոր եղանակով հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի ներդրմանը, մինչև այսօր է վերջինիս տեսակարար կշիռը շարունակում է մնալ ցածր, և այդ նպատակով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծով միջոցառումների նախատեսումը ողջունելի է:



IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով, մի կողմից, միջազգային ստանդարտների, մասնավորապես՝ ՏՀԶԿ, և առաջավոր փորձի, մասնավորապես՝ ԵՄ և ԱԼԳ երկրներ, մյուս կողմից, ներպետական օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրությունից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ, մի կողմից, վերջերս կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ազդարարման համակարգի օրենսդրությունը տարածվում է նաև մասնավոր հատվածի աշխատողների վրա, իսկ, մյուս կողմից, առկա չէ պետության կողմից գործարկված մասնավոր հատվածում խախտումների վերաբերյալ ազդարարումների համակարգ, որի մասին բարձրաձայնված է նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծում, առաջարկվում է ՀՀ-ում ներդնել մասնավոր ոլորտում ներքին ազդարարման հետևյալ մոդելը.

1. Ազդարարման ներքին ընթացակարգերի (channels) պարտադիր սահմանման օրենսդրական պահանջի նախատեսում հետևյալ սուբյեկտային շրջանակի համար՝

ա) իրավաբանական անձինք, որոնց աշխատողների կամ հաստիքների քանակը գերազանցում է օրենքով սահմանված որոշակի շեմը: Առաջարկվում է որպես այդպիսի շեմ կարգավորման սկզբնական շրջանում սահմանել երկու հարյուր հիսունը, և մշակել ժամանակույց, որի համաձայն շեմը աստիճանաբար կնվազի՝ հասնելով հիսունի.

բ) անկախ աշխատողների կամ հաստիքների քանակից՝ իրավաբանական անձինք.

(i) որտեղ պետությունը կամ համայնքն ունի ավելի քան 50% բաժնեմասնակցություն, կամ որոնց տարեկան ֆինանսավորումը հանրային (պետական կամ համայնքային) միջոցներից, օրինակ՝ նվիրաբերության միջոցով, գերազանցում է օրենքով սահմանված որոշակի շեմը.

(ii) որոնք գործունեություն են ծավալում կոռուպցիոն կամ հանրային շահին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի տեսանկյունից բարձր ռիսկայնությամբ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ֆինանսական ծառայություններ և շուկաներ, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելում, տրանսպորտային անվտանգություն, շրջակա միջավայրի պահպանություն և այլն, ներառյալ՝ այն ոլորտները, որոնց համար «Ազդարարման տեսակների կատարելագործում» փորձագիտական վերլուծության շրջանակներում առաջարկվում է ձևավորել արտաքին ազդարարման համար պատասխանատու ոլորտային իրավասու մարմիններ, որոնք ներառում են ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, ՀՀ քաղաքաշինության,

տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, ՀՀ կրթության տեսչական մարմինը, ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմինը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեն և այլն.

(iii) որոնք մասնակցում են պետական գնումներին, եթե գնման ապրանքների/ծառայությունների/աշխատանքների արժեքը հավասար է կամ գերազանցում է օրենքով սահմանված որոշակի շեմը.

(iv) որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցում է օրենքով սահմանված որոշակի շեմը.

(v) որոնց վրա տարածվում է կորպորատիվ կանոնագրքի կիրառման իմպերատիվ պահանջ օրենքով կամ Ֆոնդային բորսայի կանոններով, օրինակ՝ ցուցակված ընկերություններ.

(vi) որոնք սեփական նախաձեռնությամբ ներդրել են հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր՝ համապատասխան պետական աջակցության ծրագրերից կամ այլ արտոնություններից օգտվելու նպատակով.

2. Ազդարարման օրենսդրության տարածում մասնավոր ոլորտի աշխատողների վրա ամբողջ ծավալով, որ կներառի հաղորդումների ներկայացման ընթացակարգերը և ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները, մասնավորապես՝ ներքին ազդարարման եղանակից օգտվելու հնարավորությունը: Այդ նպատակով, ներքին ազդարարման համակարգ սահմանելու օրենսդրական պահանջի շրջանակներում հետևյալ հիմնական բաղադրիչների նախատեսում՝

ա) ներքին ազդարարման տարբեր (գրավոր և բանավոր) ուղիներ ստեղծելու պարտավորություն, այդ թվում՝ փոստի, հեռախոսի, ձայնային հաղորդակցության այլ համակարգերի, ֆիզիկական բողոքների արկղերի, առցանց ձևաթղթերի, ինչպես նաև հաղորդում ներկայացնող անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում առկա (դեմատոլ) հանդիպման (physical meeting) միջոցով.

բ) մասնագիտացված երրորդ կողմերի կողմից՝ իրավաբանական անձի անունից ներքին ազդարարումների ստացման արտապատվիրված (outsourced) ծառայությունների մատուցման հնարավորություն.

գ) ազդարարումների պատասխանատու անձի/ ստորաբաժանման նշանակման և վերջինիս կողմից ազդարարման պատշաճ ընթացքին հետևելու պահանջ.

դ) ազդարարումների ստացման հաստատումը ազդարարին ներկայացնելու առավելագույն ժամկետ (որպես նվազագույն ժամկետ առաջարկվում է յոթնօրյա ժամկետի սահմանում) և ազդարարման հետագա ընթացքի վերաբերյալ ազդարարին ծանուցելու առավելագույն ժամկետ (որպես առավելագույն ժամկետ առաջարկվում է երկամսյա ժամկետի սահմանում)։

ե) ազդարարման հետ կապված հարաբերություններում անկախություն, գաղտնիություն և տվյալների պաշտպանության երաշխավորման պահանջ՝ ինչպես իրավաբանական անձի, այնպես էլ՝ մասնագիտացված երրորդ կողմի կողմից։

զ) արտաքին ազդարարման իրավասու մարմիններին արտաքին ազդարարման ընթացակարգերի վերաբերյալ հստակ և հանրամատչելի տեղեկատվության տրամադրման պահանջ։

է) օրենքի պատշաճ կիրառումն ապահովող տիպային չափորոշիչների նախատեսման պահանջ/հնարավորություն՝ հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները և միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների հատուկ կարիքները։

ը) ներքին ազդարարման ընթացակարգերի հաստատման պահանջ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կողմից՝ սոցիալական գործընկերների և աշխատողների ներկայացուցիչների համաձայնեցությունը ստանալուց հետո։

թ) իրավաբանական անձանց կողմից՝ ազդարարման հասցեատերերին իրենց սեփական բացատրությունները և ապացույցները ներկայացնելու և հավաքագրված ապացույցների դեմ առարկելու հնարավորության տրամադրման պահանջ։

ժ) ներքին ազդարարման կանոնների վերանայման նվազագույն ժամկետի սահմանման պահանջ (որպես նվազագույն ժամկետ առաջարկվում է եռամսյա ժամկետի սահմանում)։

ի) իրավաբանական անձանց կողմից՝ ստացված ազդարարումների ոչ հրապարակային ռեգիստր ստեղծելու և վարելու, ինչպես նաև ազդարարման իրավասու կենտրոնական մարմնին պարբերաբար վիճակագրական տեղեկատվություն ներկայացնելու պահանջ։

լ) իրավաբանական անձանց կողմից՝ իրավասու կենտրոնական մարմնին ազդարարման պատասխանատու անձ նշանակելու մասին ծանուցման պահանջ (որպես նվազագույն ժամկետ առաջարկվում է երկամսյա ժամկետի սահմանում)։

3. Ազդարարման ոլորտում իրավասու կենտրոնական մարմնին մասնավոր ոլորտում ներքին ազդարարմանն առնչվող հետևյալ լիազորությունների/գործառույթների/գործիքակազմի վերապահում։

ա) կենտրոնական վերահսկողության իրականացում իրավաբանական անձանց կողմից ներքին ազդարարման համակարգերի ներդրման, դրանց արդյունավետության ապահովման, դրանցով ստացված ազդարարումներին պատշաճ ընթացք տալու դեպքերի, ինչպես նաև ազդարարների պաշտպանության օրենսդրության այլ պահանջների խախտումների նկատմամբ,

բ) աջակցության/խորհրդատվության տրամադրում իրավաբանական անձանց՝ օրենքի համապատասխանությունն ապահովելու նպատակով, այդ թվում՝ ներքին ազդարարման համակարգերի նախագծման/ներդրման և ազդարարման բարդ գործերի քննության հարցում.

գ) ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանության գործիքակազմ՝ իրավաբանական անձանց կողմից՝ ազդարարի նկատմամբ որպես հնարավոր վնասակար գործողություն որակվող աշխատանքային ակտի ընդունման պահանջ՝ միմիայն իրավասու մարմնի հավանությունը ստանալուց հետո՝ այդ նպատակով նախնական հարցման ներկայացման միջոցով.

դ) վիճակագրական տվյալների ստացում իրավաբանական անձանց ներքին ազդարարումների վերաբերյալ և դրանց հրապարակում տարեկան հաշվետվության շրջանակներում:

ե) բարեվարք կառավարման համատեքստում կոռուպցիայի և դրա մասին բարձրաձայնող ազդարարների նկատմամբ վնասակար գործողությունների կանխարգելմանը և ազդարարման համակարգերի ներդրման կարևորության մասին գործարար հատվածի իրազեկում՝ մասնավոր ոլորտին բարեվարք կառավարման համատեքստում ազդարարման (ընթացակարգերի ներդրման) անհրաժեշտության մասին հանդիպումների անցկացման, մասնավոր ոլորտում ազդարարումը խթանելու նպատակով կազմակերպչական մշակույթը և բարեվարք կառավարման ջանքերը գնահատելու/չափելու գործիքների, իրազեկման նյութերի մշակման և այլ եղանակներով:

զ) իր լիազորությունների կատարման նպատակով իրավաբանական անձանցից անհրաժեշտ փաստաթղթեր և բացատրություններ պահանջելու, կոնկրետ գործով ազդարարմանն ընթացք տալու մեթոդն ու դրա արդյունավետությունն ուսումնասիրելու, ինչպես նաև օրենքի պահանջների խախտման համար տույժեր և տուգանքներ նշանակելու իրավասություն:

4. Օրենսդրական կարգավիճակի տրամադրում Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կռալիցիայի քարտուղարությունը համակարգող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործարկվող «Բիզպաշտպան» հարթակին՝ որպես մասնավոր հատվածի նշյալ կազմակերպությունների աշխատողների կողմից ներքին ազդարարումների ներկայացման արտապատվիրված (outsourced) խողովակ (channel)՝ հաշվի առնելով վերջինիս կողմից գործարար ոլորտում հանդիպած կոռուպցիոն դեպքերի և այլ հարակից խնդիրների մասին

ույրտային ազդարարումների ստացման և ուսումնասիրության տարիների փորձը և անվտանգության, անկախության և գաղտնիության երաշխիքների ապահովումը, ինչպես նաև նման կարգավիճակի տրամադրում հետագայում ստեղծված համանման այլ հարթակների, որոնք ևս կապահովեն անվտանգության, անկախության և գաղտնիության երաշխիքները: Առաջարկվում է համապատասխան համագործակցության նորմատիվ հիմքերի սահմանումը՝ «Բիզպաշտպան» հարթակի և կենտրոնական մարմնի միջև:

5. Կամավոր միջոցառումների խթանման և հակակոռուպցիոն համապատասխանության ապահովման համատեքստում՝

ա) կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի ընդունում, որը կպարունակի ազդարարման բաղադրիչի վերաբերյալ համապարփակ կարգավորումներ, ինչպես նաև դրա կիրառման վերահսկողության մեխանիզմների սահմանում.

բ) որոշակի խումբ սուբյեկտների նկատմամբ (օրինակ՝ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններ, բորսայում գրանցված թողարկող կազմակերպություններ) կանոնագրքի և հատկապես՝ հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի կիրառման իմպերատիվ պահանջի սահմանում.

գ) խրախուսող նորմերի սահմանում՝ դիտարկելով կանոնագրքի և հատկապես՝ հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի առկայությունը՝ որպես իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառող կամ մեղմացուցիչ հանգամանք, ինչպես նաև՝ որպես առավելություն տվող չափանիշ պետական գնումների գործընթացի, պետություն-մասնավոր հատված գործընկերության, պետական աջակցության, հարկային կամ մաքսային արտոնությունների տրամադրման ժամանակ.

դ) իրավաբանական անձանց կողմից՝ հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի ներդրման խթանմանն ուղղված հավաքական գործողությունների, նախաձեռնությունների և վերապատրաստումների իրականացման նպատակով մասնագիտացված ՔՀԿ-ներին և մասնավոր կառույցներին (գործարար շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ և գործարար անդամակցությամբ զբաղվող կազմակերպություններ) պետական բյուջեից միջոցների հատկացման նպատակով գործառույթների մրցակցային պատվիրակման կառուցակարգերի սահմանում և իրականացում: